

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY


ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020



ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՐԵՆԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ

Կյանքի 74-րդ տարում երկարատև հիվանդությունից հետո 2020 թ. նոյեմբերին վախճանվեց ԵՊՀ վաստակաշատ դասախոս Անդրանիկ Խորենի Վարդանյանը:

Ա. Վարդանյանը ծնվել է 1946 թ. ապրիլի 9-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: 1955 թ. ընտանիքով տեղափոխվել է Թալինի շրջանի Արտենի ավանը: 1964 թ. արձաթե մեդալով ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1965 թ. ընդունվել և 1970 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1970-1973 թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում՝ ԽՍՀՄ պատմության մասնագիտությամբ:

Ա. Վարդանյանը 1976 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ պատմության ֆակուլտետում որպես լաբորանտ, ապա պրոֆ. Վ. Ռշտունու անվան կաբինետի վարիչ:

1981 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914 - փետրվար, 1917 թթ.)» թեմայով: 1984 թվականից դասախոսել է պատմության ֆակուլտետում՝ որպես ԽՍՀՄ պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, ապա՝ դոցենտ: Դասավանդում էր Ռուսաստանի պատմություն և մասնագիտական մի շարք դասընթացներ:

Ա. Վարդանյանը հեղինակ է ավելի քան մեկ տասնյակ գիտական և ուսումնամեթոդական հոդվածների: Գիտական հետազոտությունները նվիրված են Արևելյան Հայաստանի նախախորհրդային շրջանում և խորհրդային առաջին տարիներին գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակին:

Էդիկ Մինասյան – պ.գ.դ., պրոֆեսոր